



Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

# Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճալիք

Ժ.Պ. Տարի, Թիւ 44

Շ Ա Բ Ա Թ

9 Մայիս, 1898

**ՊԱՅՄԱՆՆԵՐ.** — Ծաղիկի բաժանորդագինն է **Տարեկան՝** Պոլսոյ համար 40, Գաւառներու համար 50 դան. : **Վեցամսեայ** Պոլսոյ համար 25, Գաւառաց համար 30 դան. : **Հասը 30 փարայ :** Բաժանորդագրութիւնք քիւի վրայ է, տարեկան բաժանորդներ պիտի ստանան **52** եւ վեցամսեայներ **26** քիւ Ծաղիկի : Պաղտաստեան Գրատունը յանձն կ'առնէ հոսուցանել բաժանորդներուն վնասները,

Իր անդամներու հրատարակութիւնքն ա'ր եւ է արգելի հանդիպի : Ծաղիկի բաժանորդներն իրաւունք ունին 100 այցեխարս նստելու : Հանրոգոսն ցիւրքերու վերաբերեալ յօդուածներ եւ քրթակցութիւններ շնորհակալութեամբ կ'ընդունուի : **ՀԱՍՅԷ.** — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէ՛տք է ուղղել Պաղտաստեան Գրատունը, Կ. Պոլիս, Սուրբան Համան, քիւ 14 :

## ԿԵՆԱՑ ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆՔ

Ընդհանրապէս կենաց թշուառութեանց մեծագոյն մասն անոր կարօտութիւններէն եւ անոնցմէ զրկուած ըլլալէն առաջ կուգայ, կարօտութիւն ըսելով իր ամենահարկաւոր պէտքերը կ'իմանանք, կենաց ամենահարկաւոր պէտքի պակասութիւնը անոր թշուառութիւն կը բերէ : Ամեն հասակի կեանք, տղու, երիտասարդին, չափահասին եւ ծերին կեանքը իր պէտքերէն զուրկ՝ թշուառ կ'ըլլայ : Տղան՝ իր ուտելիքն ու հագնելիքը, երիտասարդը՝ անոնցմէ զատ իր կեանքը կատարեալ ընող էակը, չափահասը՝ անոնցմէ զատ իր ընտանիքին հանգիստ տուող առարկայները, եւ ծերը՝ անոնցմէ ետքը իր վերջին աւուրց մէջ պէտք եղած զօրութիւնն ու հանգստութիւնը եթէ չը գտնէ թշուառ կ'ըլլայ : Ճաւոց, հիւանդութեանց, վիշտերու, նեղութեանց եւ տառապանաց մեծ մասն դարձեալ կենաց ամենահարկաւոր պէտքերուն պակասութենէն յառաջ գալով, անոնց պատճառած թշուառութիւնն ալ դարձեալ կարօտութեանց արդիւնքն է : Ուրեմն մարդս կարելի եղածին չափ նուազ թշուառ կ'ըլլայ երբ իր ամենակարեւոր պիտոյքն ունենայ :

Բայց մարդիկ՝ պէտք էր որ այնչափ թշուառ չըլլային ինչ չափ որ են հիմա. վասն զի նախախնամութիւնը անոնց պիտոյքը կարգադրած է. անոնց կենաց հետ զանի պահպանելու միջոցներն ալ

տուած է : Ուրեմն մարդիկ ինչո՞ւ այնչափ թշուառ են, կամ գէթ ինքզինքնին այնչափ թշուառ կը զրտնեն : Ասոր երկու պատճառ կը գտնենք. մէկը իրենց կենաց բուն պիտոյքը չը գտնելը. միւսը պէտք եղածէն աւելին փնտռելը : Ահա ասոնք են, որ էն երջանիկ մարդն ալ թշուառ կ'ընեն : Վասն զի իրենց կեանքը անվրդով եւ հանգիստ պահելու համար, ինչ որ պէտք է, եւ ինչ որ կը պարտին ընել ու փնտռուել՝ նոյնը չը գիտնալով կամ չուզելով գիտնալ՝ կելին այն տեսակ բաներ փնտռելու, որ փոխանակ զիրենք հանգիստ ընելու՝ անհանգիստ ալ կ'ընէ. եւ ետքն ալ միջոց չունենալով բուն իրենց պիտոյքը ճարելու՝ թշուառ կ'ըլլան. ըսել կ'ուզենք թշուառ կ'ընեն ինքզինքնին : Մարդիկ, ի բնէ նախանձոտ՝ միշտ իրենց վերին կը յառեն իրենց աչքերը, եւ հագիւ իրենց պիտոյքն հոգալու միջոցն ունենալով՝ կը ջանան կ'աշխատին, կը նեղուին ու կը տագնապին՝ իրենցմէ վեր եղողին հաւասարելու, եւ չը կրնալ հասնելով ալ բուն իրենց վիճակին ներածն ալ զրտնալու անկարող՝ հետեւաբար թշուառ կ'ըլլան :

Զուարճութեան ու զեղխութեան տալով ինքզինքնին՝ հիւանդ եղած ատեննին եթէ անգամ մը բժիշկ կանչելու կարողութիւննին չը մնայ իրենց պիտոյքը չը գտնելը ըսել կ'ըլլայ : Տան մը կամ անձին զարդարանքին համար մեծագումար ծախքեր ընելը ու վառարանին մէջ բաւական ածուխ կամ կուսակնին տաքցընող բաւական հագուստ չունենալը մեծ զղջում կը պատճառէ՝ իր բանը չգիտնալուն վը-

րայ. տարի մը հարուստի պէս ապրելէն ետեւ, քանի մը տարի ալ աղքատ եւ պարտատէրներու երեսէն անհանգիստ ու սրտագողով ապրող աղքատ եւ թշուա ըլլալը՝ իր բուն պէտքերը չը հասկընալէն առաջ կ'ուզայ. իր բանին գործին մէջ դանդաղութիւն անհոգութիւն ընելով կորուսաներ ընելէ ետեւ, քիչ ատենի մէջ չխրատուելով իր ընծացքը չփոխող ու պէտք եղածին պէս չվարուողը, իր բուն պէտքերը ճանչելովն ալ անոնք ճարելու մասին անհոգութիւն ըրած ըլլալովը, եթէ զանոնք չգտնէ ու թշուա ըլլայ՝ դարձեալ իր թշուաութեանը ինք պատճառ եղած կ'ըլլայ:

Իրենց այս աշխարհի մէջ տրուած կեանքը հանգիստ ու ապահով վարելու ինչ որ պէտք է, աղէկ մը չքննելով ու չհասկընալով, թե՞մեւ մտածութեամբ մը իբր թէ զանոնք գտածի պէս կ'եւլեն այնպիսի ընծացք մը կամ գործ մը կամ վարմունք մը կ'ստանձնեն, որ զիրենք թշուա ընելու կը ծառայէ. եւ երջանիկ ըլլալու յուսով առաջ զացած ատեննին, յանկարծ՝ զիրենք թշուա տեսնելով կը զարմանան իրենց պատահած այս մեծ փոփոխութեան վրայ՝ ու բազայր կ'անիծեն կը նզովեն՝ իբր թէ նա արգելք եղած ըլլայ իրենց խորհրդոց ի գործ դրուելուն կամ գործոցն յաշտութեանը:

Իրենց կարողութիւնը չը կշռելով, անկէ վեր մեծամեծ գործերու ձեռնարկելով, երկար ատեն հոգինին ու սրտերնին մաշեցընելով աշխատելէն ու յոգնելէն ետեւ, իրենց մեծամեծ յոյսերուն ու ակնկալութեանց ի դերեւ ելնելը տեսնելով, կը զղջան անօգուտ զղջմամբ մը ու կը ցախն իրենց այն յուսով վատնած ժամանակին, աշխատութեան ու ստակին վրայ. եւ մէկ կողմէն ալ, այն անհատանելի երջանկութեան սպասած ատեն, իրենց զլխուն եկած թշուաութիւնը տեսնելով, զոր հեռու պիտի ըլլար իրենցմէ, եթէ իրենք բուն իրենց պիտոյքը հոգալու ետեւէ ըլլային, այն թշուաութիւնը տեսնելով կ'ըսեմ, ալ կ'սկսին լի բերանով բաղդն անիծել, ամենեւին չը մտածելով թէ բազայր չէր զիրենք իրենց աստիճանէն աւելի բարձրագունին հասնելու թելադրողը, այլ իրենց պակասուոր ու խեղ մտածութիւնը, որ չը կրցաւ զիրենք համոզել իրենց փախաբածին անկարելի ըլլալն, մինչդեռ քանի որ իրենց առաջին վիճակին մէջ ալ ապահով կեանք մը վարելու վստահութիւն չունէին:

Իսկ ճշմարիտ պիտոյքը ճանչնալու եւ պէտք եղածէն աւելին չփախաբելու գորութիւնն ալ գիտութիւնը կ'ուսայ մարդու: Ան է որ կը ցուցնէ մար-

դոց ի՞նչ պէտք է հանգիստ ու ապահով եւ երջանիկ կեանք մը վարելու համար. ան է որ զմարդ կրնայ ամեն վիճակի մէջ երջանիկ ընել, քիչով եւ ունեցածովն գոհ ըլլալ, չունեցածին չափազանց փափաք մը չունենալ, եւ ասկէ զատ գիտնալ, որ մարդ փառքով, ճոխութեամբ, պատուով եւ այլ այսպիսի կատարելութիւնով երջանիկ չըլլար: Ուրեմն գիտութիւնը, որ մարդոց կ'ուսուցանեն ամեն վիճակի մէջ հանգիստ ու անխռով ապրիլ, որ կը ցուցնեն մարդոց բուն իրենց պիտոյքը ճարելու միջոցները, կը բառնան մարդոցմէ՝ զանոնք կրթելով՝ իրենց կենաց թշուաութեանց մեծագոյն մասը, եւ զանոնք երջանիկ կ'ընեն: Կը բառնան անոնցմէ ամեն վիշտ, նեղութիւն, տագնապ մտատանջութիւն. կ'ընծայեն անոնց տեղ հանգստութիւն, ճշմարիտ զուարճութիւն, սրտի հանդարտութիւն ու մտքի խաղաղութիւն. եւ իրենք չխմանալով, ուրիշներուն թշուա սեպուած վիճակը իրենք երջանիկ կը գտնեն:

ԳԵՂԱՄ

ԽԱՐԲԵՐԴԷՆ ՄԵՋ ԿԸ ԳՐԵՆ

Չատկի երեքշաբթին քանի մը երիտասարդ բարեկամներու հետ պտոյտ մ'ունեցանք՝ շէշկայի Սուլալանք: Մէզ զերէէն մինչեւ վանքը հետիտան ժամուկէսէն հասանք:

Էն առաջ մեր աչքերուն զպայն լուսահոգի վարդապետներու շիրմաց երկախն ու մամուսպատ խաչքարերն ուշագրաւ, յետոյ ամպեր ձեղքող սեւ բարախներ եւ դարաւոր ուսինս, որոնք տեսեր եւ լսեր են անշուշտ անցեալ շերտաւանդ վանականներու լացն ու երգը, արցունքն ու աղօթքը երկնայոյց: Քանի մը քայլեր ալ կ'առնենք եւ աճա՛ մեր գէմ կը կանգնի վանքին հոյաւկապ մանկանոցը, որ բարեսէր նոտրատուներու ջերմ արցունքին եւ յօծար նուէրին խառնուրդէն ձլած ծաղիկ մ'է, ուր ՅՉ որբ սրտեր կը հրճուին կենսալիր:

Այս տեղի որբերը աւելի առողջ եւ աւելի ազնիւ երեւցան մեզ քան միւս որբանոցներունը...

Որբերուն հագուստը շատ պարզ ու կոկիկ է, կապոյտ կառէ չորվոտ (շալվար) մը եւ մինչեւ ծունկերը երկարող խառէ հագնի մը:

Այս որբերուն կերակուրի պակասը՝ տեղին կենսատու օղբ եւ կաթնահամ ջուրը կը լրացնեն մասամբ:

Մօտերս Ամերիկացի մեր գլխաւոր ազգայիններէն տանք 17 լիբր հանգանակելով զրկեր էին յիշեալ որբանոցին Չատկի տաթիւ սրբերուն փոքրիկ, սիրուն ժպիտներ պատճառելու:

Այսպիսի բարի զգացումներ աբդեօք ուրիշ շատ մը ազգայիններ պիտի չունենան, որոնց պիտի փութանք հրապարակաւ յայտնել մեր շնորհակալիքը:

ԵՐՈՒԱՆԴ

ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՄԸ ՍԵՆԵԱԿԻՆ ՄԷՋ

Պարոն գրագիր, սնտուկին մէջ բաց կայ :

— Ես անանկ բան չի տեսայ , տեարակները ինձմէ աննեղնէզ վերջը սնտուկը բացուեցաւ նէ՛ ան չգիտեմ :

— Ո՛չ պարոն , այս բացը շատոնց ի վեր կայ եղեր բաց գուք չէք տեսեր :

— Կրնայ ըլլալ , գրադմունքս շատ ըլլալուն պատճառաւ , առանկ բաները տեսնելու ժամանակ չէի ունենար , այսու ամենայնիւ դարձեալ բաց ըլլալու չէ կարծեմ :

— Կայ պարոն , մենք ըրինք հաշիւը :

— Ի՞նչպէս հաշիւ ըրիք , ալաֆրանկա թէ յունական :

— Մենք միշտ ալաֆրանկա կը գործածենք :

— Ահաւասիկ բաց գտնելուդ պատճառը այս եղած ըլլալու է , ծառանիդ հաշիւները յունական թուանշանով բաներ էի , եւ բնաւ բաց չէի տեսած , թէ որ գուք ալ հաշիւները նորէն յունական թուանշաններով ընէք նէ չիտակ կը գտնէք :

— Բայց պարոն վերջը այնպէս ալ ըրինք դարձեալ չեղաւ :

— Շատ բան , ինձի անցած ստակը վար չիջա՞ք :

— Ի՞նչպէս կ'ըլլայ որ վար իջնանք :

— Ահա հոս ալ սխալ ունինք . թէ որ ինձի անցած ստակները վար իջնէիք այն ատեն հաշիւը ճիշդ կուգար , որովհետեւ ծառանիդ մինչեւ հիմա բնաւ բաց չէի գտնիր կոր : Ասկէց զառ գործը տեարակները բռնելուն վրայ է , թէ որ կանոնաւոր բռնուի ինչո՞ւ բաց պիտի մնայ :

— Բայց ի՞նչ կ'ընէք մատաւին անձնական հաշիւը եւ տան ծառաներուն ամսականը սենեակին ծախսերուն կարգը անցնելով եկամուտէն ի՞նչպէս վար կ'իջնուի :

Ըսել է թէ այս բացը գոցելու համար ձեր եւ մատաւին անձնական ծախքերն ալ սնտուկը ապու է :

— Անշուշտ , թէ որ չի տայ հաշիւը կ'աւրուի եւ գանձապետն ալ պատասխանատուութեան տակ կը մնայ , որովհետեւ եթէ հաշիւը բռնուի կրկնատոմարի հաշուով սնտուկին բացը կը գոցուի եւ արդէն կրկնատոմարի գրութեամբ այս հաշիւը չիտակ է , թող թէ կրկնատոմարի գրութիւնը արդէն սխալ կամ պակաս չընդունիր :

Ըսել է որ կրկնատոմարի գրութեամբ պարտքը առնելիք կ'ըլլայ , առնելիքն ալ պարտք :

— Պարոն , տոմարակալութեան այս ճիւղին մէջ գանձապահը ամենեւին պարտական չի մնար , պարտական կամ սնտուկին շահը կ'ըլլայ , կամ շահը սնտուկ :

— Ըսել է այս հաշուով ալ ձեր սնտուկը պարտական կը մնայ կոր :

— Սանկ չըսե՛ս , սա ուրիշ ինչիւր , դուք առաջ կ'ըսէիք կոր թէ ես պարտք ունիմ :

— Լաւ այս ստակը ո՞ւրկէց կառնուէր :

— Սնտուկը պարտական է :

— Թէ որ մէջը ստակ չըլլայ :

— Այն ատեն սնտուկին դէմ բողոքելու եւ վերցնելու է :

— Սնտուկը հիչ կը վերցուի՞ :

— Ինչո՞ւ չէ , մանաւանդ որ եթէ ըստծնուդ պէս մէջը բան մը չըլլայ , շատ դիւրաւ կը վերցուի :

— Ըսենք թէ վերցուցինք , ի՞նչ պիտի ընենք քանի որ մէջը պարտաւ է :

— Այն ատեն սպասելու է որ շահաւոր գործեր ըլլան եւ սնտուկը լինայ :

— Ինչո՞ւ այսչափ կը նեղուիք մեր եկեղեցիին Հիւանդանոցին սնտուկն ալ բաց է , նայէ թաղականները եւ կամ հոգաբարձուները կը նեղուի՞ն կոր :

— Բայց այս սնտուկը իմ անձիս կը վերաբերի , անոնք ինձի շտի հոգ չեն կրնար տանիր , հարկաւ գիտես :

ՄԱՅԻՍ ՓԱՐԹԻԹԻ

Մայիսի գեղազուարճ օրերուն մէջ Բեաղըտնանէ գացող բարթիթներու ծայրը փրթաւ :

Անցեալ կիրակի օր Ռոքոս ազա առաջուց արուած որոշման մը համեմատ պէտք եղած պատրաստութիւնները տեսած էր Բեաղըտնանէ երթալու համար . ընտանիքը զիչելը քուն չէր քնացած կանուխէն ճամբայ ելնելու համար , եւ ահա արշաղոյսին տան տիկինը գնաց խոհարար Մարտիրոս աղբարը արթնցնելու :

Մարտիրոս աղբար , պու նէ վաղթըն ուղղուտ տըր , պիլիբսին քի պու կիւն Բեաղըտնանէյէ կիտիլէճէք , տահա հիչ պիլ չէյ հազըր տէյիլ :

— Տուտու զիւն հիչ խասավաթ մաներ , պիլ չէյ պիլիբուխ , պէն չիմտի թէմիլգէնէ էթի տողրար թուղարըմ , պիլիչա պիլ չէյ իսթէ՛ր մի :

— Մարտիրոս , սէն պու կիւնլէրտէ չըտըրտըն , պիլ քէպապ հա՞նկըմըղ իտարէ էտէր , կիւղէլ պիլ միտեա տղմասը օյյ ամմա կէչէն կիւնքի կիպի աղղընա պուրնուտ չէվիլմէ :

— Կէչէն զիւն պէնիմ նէ զապաթըմ վար , բաֆտան թապախ ալտըղըմտա թուլուխ տըր թանճըրէնին իչինէ տուչաը :

— Իչթէ կէնէ էօյլէ պիլ խըմպըլըզ իթմէյէսին , պիլ տէ եաղըր էնկիւնար եափ , ամա պիլ ազ պօլճա եափ քի եէր թութար :

— Արթըրի պիլ օ սըրալարը պիլիբուխ :

— Հա , պիլ տէ կիւղէլ իրմիկ հէլվասը եափ , ամա բուսուլընտա փիչիլմէլի , Մարինին ճանը իսթիտի էյի պիլ չէյ օյտուն :

— Ճանըմ աղնատրի ա , սէն էօյլէ պաչը ուճուլտա տուրաճախասն , պէն պիլ չէյ եափամամ :

— Իչթէ կիտիլօրում , գուղում Մարտիրոս աղբար , բարութասըզ պիլ չէյ օյմասըն :

— Տէր Աստուած տիւ կիտէս , աղնատրի ճանըմ , էնկատար խայվան տէկիլիլ :

— Աֆէրիմ Մարտիրոս աղբար , սէնի կէօրէյիմ , ըսելով վեր ելաւ քիչ մ'ալ վերինները կարգի դնելու , եւ նախ ամուսինէն սկսելով ըսաւ :

— Ռոգոս աղա, պու սապահարը կէճէլիքէր իլէ կէզինմէյի եէնի առէթ մի էթտին:

— Արթըզ օ սիդին ալաֆրանկանըդ իչլուն հիչ ըս- հաթըմը պօզամամ:

— Մամա պէօյիւն Քեաղըտխանէյէ կիտիլէճէթ մի:

— Էլպէթ կիտիլէճէթ, նէ տուրուեօրսըն կիլինսէնէ:

— Տուտու, սիյահ կուօն Քիստանըմը կիլինէյիմ:

— Գըզըմ օ պիր քէթէն Քիստանըն տահա եէնի, իչ- թէ օնու կիլ, օ պիր Քիսթանըն հազըզ արը պէրպատ օ- լուր:

— Մարի, սէն ազապանըն լազըրտըսընա պաբմա կոնօնու կիլ, զահէր փաղար կիւնիւ իլէ օ գատար գա- լապալըգտա քէթէն Քիսթան իլէ կիտէճէթ: Ռոգոս աղա, Բասգալարա պիր իսպէր էթսէթ, Անէթ շէն պիր գըզ արը, տէլի տօլու էյլէնիբիզ:

— Նասըլ պիլիբսէն էօյլէ եափ, սէն զըզա սէօյլէ պիր գահվէ տահա փիչիբսին:

— Ծանըմ գալք կիլին քի պիր սահաթ էվվէ կի- տիլէճէթսէ կիտիլսին:

— Սիզ կիլինէնէ գատար պէն պէչ տէֆա սօյունուր կիլինիբիմ, սէն շու գահվէյի սէօյլէ:

— Գըզըն իչի վար, պէն սէ թուալէթիմի վէրմէյէ կիտիյօրում:

— Րէչինա տուտու:

— Նէ՛ վար Մարտիրոս:

— Եաղը էնկիլնարա շէքէր զօյո՛ւմ մը:

— Էյ պու գուզա իչտէ, ծօ հայվան, բաթ լիճան պէօ- ըյինէ հիչ շէքէր օլո՛ւր մը:

— Ծանըմ իրըսլանմա, շէքէրսիզ իսթէրսէն շէքէր- սիզ եափարբիս:

— Հայտէ Բասգալարըն էվինէ կիթ տէ, տուտու սէլամ էթսի, պու կիւն Քեաղըտխանէյէ կիտէճէթէր քէնտիլէրտէ պուլուրսուլար տէ, պագ նէ ճէվապ վէ- ըրլէր: սէն տէ սօնդրա եէմէքլէրի կէօնտէր:

— Աղնատըմ, աղնատըմ, պէն հէփսինի սըրասընտա եափար եաիըշարըրըմ սէն հիչ հիւրէխ թիւքէթմէ:

— Էյ սօղըրուտու քիմ պիլիբ նէ՞ ցուցանք իչէր չը- գարաճագսըն, հայտէ կիթ սէն տէտիլէրիմի եափ, պէն տէ կիտէյիմ փէք կէճ գալընտը, ըսելով իւր սենեակը քաշուեցաւ ու մէկ ժամուան մէջ աճապարանօք հագ- ուելով պատրաստուելէ ետքը ընտանիքը մէկտեղ առած Քեաղըտխանէ գնաց, ուր քիչ մը ետքը Բասգալաներուն ընտանիքն ալ հասաւ:

— Մ. Ժան քէօչկիւն եանընսա օթուրսաք էյի օլ- մա՞ց մը:

— Նասըլ իսթէրսէնիզ մատամ, հէմ շու պահաղը գալապալըզտան ուզագ օլուրուզ:

— Աման Մարի, շու ցուցանք դարըլարա պագ, քա վո՛ւյ... շիմտի չըտըրըրըմ:

— Բէք գարիքաթ իւր շէյլէր, Ռոգոս աղա շուճարըն լիւքսիւնէ տիգգաթ իսթէրիմ:

— Օնլարըն լիւքսիւ պիր թարաֆա գալըն, շու թա- րաֆտա օթուրսագ տէրիմ, էյի օլմա՞ց մը միւսիւ Ժան:

— Սիզ պէմ, փէք պէն օլուր, ըսելով ծառի մը շու քին տակ նոտան: Ինչպէս սովորութիւն է կանայք այսպիսի վայ-

րերու մէջ զիրար դիտելով զուարճանան: Մեր Ռոգոս ա- զայներուն մօտ նստող ուրիշ ընտանիք մը այս նորեկ- ներուն արզուզարդին վրայ սկսան խօսիլ հետեւեալ կեր- պով:

— Աղաւնի հանըմ, սա սաղ թարաֆի նստող կէնճին վրայի մանթօն նայէ ինտոր պիչիմի է, իմին կիւզէլիմ մանթօս մօտիսթրան ճղակտոր հանեց, հէմէն առած բա- րան աչկին խրիսի պիլէքիմ, նաֆիլէ տեղը իս գողերու հանդիպցուց:

— Իչտէ Զարուհիճայինս ալ սա պիչիմն է:

— Քա տուտու սաղիի մալլի Քիսթանըլին աչկը սախատ է ի՞նչ է, ախոց դրեր է զավալըն տահա կէնճ ալ է շատ մեղքըցայ:

— Չէ քա Արտէմ, էրկանը ախոցը ըլլալու է:

— Քա չէ դուն ալ, հիմա կէօզիւք դնելը մօտա է, մեր Յակօբ աղային ըսի որ Զարուհիճայիս ալ մէկ հատ մը առնէ տէյի, տահա չի բերաւ:

— Ախճիկ հօրդ ըսէ տէ մէկ հատ մ'ալ քեզի առնէ: Ռոգոս աղայի կողմն ալ տամա գավալիէ մէկտեղ գալով ճահիլ ճիւհիլ կգրօնուին:

— Մարի տիգգաթ էտիյօրմուտուն շու էրմէնի գա- ըրլարը պիր սահաթտան պէրի պիղիմ իւսթիւմիւզէ սէօյ- լէչիյօրլար:

— Պուճար արթըզ փէք պահաղը սօեու, պագ նէ տէրիմ Բիէր:

— Պուլուրուն մասամազէլ:

— Շու գարչըքի եէչիլ ճանֆէս Քիսթանըլ Քամիլ- եան օլայրտը տա գարչընա ալըպ օթուրայըրըն:

— Օն պէչ կիւնիւն իչինտէ վէրէմ օլուպ էօլիւրիւմ:

— Ռոգոս աղա շու Մարտիրոսա պիր պագսան, պու վազըթ օլուտ տահա կէլմէտի, իչէրիմ պահըլըպ պահը- լըպ կէչիյօր:

— Հէր շէյի սէն սըրասընա դօտուն, սաաթ գաշտա կէլ տէտին:

— Հէմէն հաղըր օլտուղու կիպի ալ կէթիւր տէտիմ, սաաթ եէտիյէ վարտը:

— Նա իչթէ օ տա կէլիյօր:

— Մօ նէրտէ գալտըն, պու գատար հաղը աճ ա- ճընա պէքլէտիյօրսըն:

— Պիր համալա չախտըլս քի, պէնի իսան թէր իչի- նէ պրախտը ղէթտի:

— Նէ իսէ չափուգ աթէչի եափ տէ քէպապը իւս- թէ գօյ:

— Թօփու զալա զալա իւչ փարչա էթ զալտը, պու գատար պարխանայա եէթմէզ քի:

— Սայըզլա՞յօրսըն կէնէ նէ եափըյօրսըն Մարտիրոս, էթ իւչ օզկա տէյի՞լ մի իտի:

— Տուտու իրըսլանմա տա պիր տիյնէ քի սէօյլէ- յէյիմ, եէմէլիլէրի թէմիգճանա համալա եիւլիլէթտիմ, Շիչլինին էօնիւնտէ սէլէնին իբի զօրը վէրտի, եէմէլիլէր սօզաղա տէ օքիւլտիւ. քէպապըզ էթին եարըսընը քէօ- փէքլէր զաբտը, պիր ազընը տա օրասաքի մուհաճիր չօճուլարը չալտըլար, հէփսի հէփսի իւչ փարչա թօփ- լայապիլտիմ:

— Քա պու նէ փորճանք ըտը պաշըմա կէլտի, պէն

սանա պին տէֆա տէմէարիմ մի քի էյի աիգգաթ էտէսին տէյի :

— Ճանրմ պէն եէմէլսէրէ ինանըրսան էյի արիսկաթ էթտիմ ամա , համալ կայմարն տէյի անախարընա արիսկաթ էթմէյէ ունութտում :

— Օ նէ՞ Րէճինա , նէ օլմուչ կէնէ :

— Աման Ռոգոս ազա , պու նէ ութանաճագ քիւչիւքլիւք օլտու միսաֆիրլէրին էօնիւնտէ , Պու հպլվան նէ գատար եէմէք վար ըսա տէօքմիււչ , պօչ սէլէյի ալմըչ կէլմիւ :

— Եօխ կէօղիւմ , սալթ քէպասպ զայ օլտու , էնկինառ , հալվա տոււմանը իլէ տուրույօր :

— Պիր քէպասպ տա օլմայը վէրսին . Րէճինա սէն սօֆրայը պրագտըր , իչէրիմ Սանթա-Մարիա գամբանասը կիպի էօթէտօր :

— Սօֆրա պրագըլմըչ արր , Մարտիրոս սէն եէմէքլէրի թապապարա չէք տէ կէթիր ըսելով ամէնքը սեղան նստան , առաջ էնկինառը սեղան ըբուեցա :

— Մարտիրոս ազբար պուսոււն իւղէրինէ պիպէ՞ր մի էքմիչսին :

— Եօխ տուտու , եէրէ տէօքիւլտիւ տէ իւսթիւ պիր ազ թօզ օլտու :

— Մարտիրոս , սէճէրէլի խըրսլանըյօրմ շու թապաղը գալտըր օրթատան :

— Ճանրմ նէ վար , ահա պախ , փուֆ , փուֆ , իլթէ պիր չէյ գալմատը :

— Հայվան գաֆայը , ճէհէննէմ օլ գարչմտան :

— Պիր չէյ քի օլմուչ , Րէճինա տուտու , նաֆիլէ խըրսլանմա , շուստան պիր ազ սարտէլա սալաթատը հարաըրթըրզ :

— Շիմտի կիտէր զուչ քիմի հաբարըրըրմ :

— Եօզ , արթըզ գահմէթ ալմա ուտա Մարտիրոս պագալ եափար ծուռ :

— Պէն սարտէլայը կէլինճէյէ գատար պիր ազ հէլվա էքմէյիլէ սաֆրա պասթըրայըմ :

— Քիմ պիլիր հափտըղը հէլվա նէ անճանտնճ չէյ սիր :

— Մարտիրոս հէլվայը կէթիր :

— Տուտու թապախ եօխ աըր հէփսի զըրըլար թէնճէրէ իլէ ղէթիրէյի՞մ մի :

— Ֆէնա սօյ եիւրէյիմին չարիքնթըր թութտու խըրսլմտան :

— Նէ գարարը վար իչիմիզտէ հապանճը կօզ քի տըրպլանսըն , թէնճիրէ իլէ կէթիր Մարտիրոս :

— Բըչաղըլա պիր ազ եիւղիւնտէն պիր հանա չէլա տէ ալթընտան ալ :

— Հէլվայա նէ օլտու քի :

— Իլթէ պին քէրէմ սէօյլէտիխ , զալտըրմըն իւսթիւնէ տէօքիւլտիւ , ազար ազար թօփլատրիս տա թէնճէրէյէ ղօյտուխ , սօխկաղըն օրթատընտա՞մ մը պրախկայըտըրմ :

— Հէօտիւկ գաֆալը նասըլ կէթիրտին իսէ , օթուրուտ սէն եէ պուսլարը , նալլէթ օլտսըն քի կիւզէլիմ բարթիթիմիզի աղզմըլտան պուրնուժուգտան կէթիրտին :

— Շիմտի արթըզ օլմուչ , սարտէլահա գանաաթ էտէլիմ տէ , հաղընտա ինչալլան պաչղա պիր փարթիթ թէրթիպ էտէրիզ տէ էյի պիր եէմէք եափարըզ :

— Սիզ պանա պիր կիւն իլէրի խապէր վէրին պախչա պիր չէյէ զարըչմայըն սօղրուտու :

— Մարտիրոս աղբար , իքէնճի բարթիթիմիզէ կէլ սէն գարըչմա տա տատամ ալըլըր եէմէք եէյէլիմ , պէնճէ իսթէրսէնիզ աճ աճընա պուրտա օթուրմամտան իսէ , էվիմիզէ կիտիպ պիր ազ փէյնիր էքմէք եէսիք Ֆէնա օլմազ ըսելով մեր Մարտիրոս ախպօր շնորհիւ անօթի վիճակի մէջ ընտանիքը տոււն վերադարձաւ : ՓՕԼ

### Զ Ո Ի Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Դասարանի մը մէջ .

Ամբաստանեալ , կըսէ նախագահը , զուք ամբաստանուած էք գօղութեան համար տոււն մը մտեր եւ դոներ խորտակեր էք , յանցաւոր ըլլալիդ կը խոստովանի՞ք :

— Այո , պարոն նախագահ , կը պատասխանէ չարածճին . բայց կ'ազաչեմ , պզտիկ պատիժ մը տուէք , սեպեցէք թէ զուք ձեզի պատիժ կուտաք :

\* \* \*

Միլան կուրնալէ վերջ երրորդ անգամ կ'ամուսնանայ այնպիսի կնկան մը հետ որ տեսքով շատ սիրուն , շատ գեղեցիկ , բայց բնաւորութեամբ անհանդուրժելի էր : Լորա Պիքընկէմ օր մը իբր կատակ կ'ըսէ բանաստեղծին՝ «Ստուգիւ վարդի նման կին մը ունիս բարեկամ» :

— Չեմ կրնար զինքը հոսէն գատել , պատասխանեց Միլան տիրութեամբ , բայց կրնամ անոր փուչերէն հասկնալ այդպէս ըլլալը :

\* \* \*

Պարկեշտասուն օրիորդ մը խոստովանանքի ատեն ի մէջ այլոց կ'ըսէ թէ անպարկեշտ երգ մը երգած է , որուն համար թողութիւն կը խնդրէ քահանայէն :

Խոստովանանայրը այսքան բացատրութենէ գոհ չըլլալով՝ կը հարցնէ թէ ի՞նչ երգ էր երգածը :

Օրիորդը առանց վարանելու կ'սկսի նոյն երգը բարձրաձայն կրկնել եկեղեցին մէջ :

\* \* \*

Սիրահար մը կ'ըսէր իրիկուն մը իր սիրուհին որ վարժուած էր իր բոլոր քմահաճոյքները գոհացուած տեսնել եւ որ շեշտակի կը գիտէր լուսինը :

— Ա՛հ , հոգիս , այնչափ փափաքով մի նայիր , չեմ կրնար զայն քեզի տալ՝ եթէ ուղեղու ելլես :

\* \* \*

Պարզամտին մէկը հանրային պարտէզի մը մէջ ծաղկաւոր օրիորդի մը ետեւի կողմը նստած էր, կ'ուզէր անոր հետ խօսքի բռնուիլ, բայց ի՞նչ ընէր, ինչպէս սկսէր: Ծար մը գտնելու կը խորհէր, երբ ճանճ մը կուգայ օրիորդին կանակին վրայ կը նստի, իսկոյն ներշնչում մը կ'ունենայ մեր պարզամտը եւ կ'ըսէ,

Օրիորդ, ետեւնիդ անասնիկ մը կայ:

— Ա՛հ, պարոն կը պատասխանէ օրիորդը սոսկումի ճիչ մը արձակելով. ներեցէք, չէի գիտեր թէ ետեւս էք:

\* \* \*

Աղջիկ, դուն տակաւին այդ պատուհանէն վազ չը պիտի գաս, հիչ հոտաեղ նստելով գործ կը քալէ՞:

— Մայրիկ, անանկ գործեր կը քալեն կոր որ մարդուս իւրքը չհասնիր:

ԹՈՉՆԻԿ

### ԷՃԷԼԻ ՊՈՒ ԻՄԻՇ

Մարդ մը ինչ կերպով որ ալ մեանի տեսողը լսողը «էճէլի պու իմիչ» կ'ըսէ:

Օրինակի համար:

Ծամբան դացած տանիդ կատգած շուն մը վրադ կը յարձակի, ոտքդ կը խածնէ, դուն ալ կը կատղիս ու շարաչար մահուամբ կը մեռնիս, տեսնողները «էճէլի պու իմիչ» կ'ըսեն:

Հիւանդ մը բժշկուելու յուսով, բժշկին կը դիմէ, ան ալ աճապարանօք բէչէթային վրայ սխալ դեղ մը կը դրէ, մարդը այդ դեղը առնելով անմիջապէս կը մեռնի, բայց լսողները դարձեալ «էճէլի պու իմիչ» կ'ըսեն:

Ծամբէ մը անցած տանիդ կտուք մը կամ ձիւտոր մը իւր ձին վազցնելով կուգայ, ձիուն տակը կը մնաս ու կը մեռնիս, դարձեալ «էճէլի պու իմիչ» կ'ըսեն:

Պատի մը տակէ անցած տանիդ յանկարծ պատը վրադ կը փլի, փխտէ կը դառնաս, տեսնողը «էճէլի պու իմիչ» կ'ըսէ:

Նեղ փողոցէ մը անցած տանիդ կը նայիս որ թրամվէյը կրակի պէս ետեւէդ կը հասնի կոր, փախչիմ կ'ըսես, կը վազես ճարդ կը հասնի կ'իյնաս ու կառքը քեզ կտոր կտոր ն'ընէ, այս տեսնողները «էճէլի պու իմիչ» կ'ըսեն:

Քսալիկ նաւակ մը ութը հողի կ'առնէ, նաւամատոյցէն կը բացուի չի բացուիր ալիք մընէ կուգայ նաւակը կընկղմէ մէջը գանուողները գանգուեքը կ'երթան, ասոր ալ «էճէլի պու իմիչ» կ'ըսեն:

### ՇԱՏ ԱՊՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԸ

Անգղիոյ հռչակաւոր թիշկներէն Տօք. Ետիլըր, այս վերնադրով յօդուած մը գրած է 12 պատուէրներով, անոնց՝ որ կ'ուզեն շատ ապրիլ եւ ուշ ծերանալ:

Ահաւասիկ կանոնները.

1. Ութ ժամ քնանալ:
2. Աջ կողմի վրայ պառկիլ:
3. Ննջարանէն պատուհան մը բաց պահել գիշերը:
4. Անկողինը պատի դէմ պէտք չէ ըլլայ:
5. Նախաճաշէ առաջ վարժութիւն ընել:
6. Գիշ միս ուտել եւ լաւ եփուած միսէն:
7. Միշտ պտոյտ ընել:
8. Պէտք չէ կենդանի գտնուիլ տան մէջ:
9. Եթէ կարելի է գիւղը ապրիլ:
10. Միշտ զբաղմունքը փոխել եւ յաճախ արձակուրդ առնել:
11. Փառասիրութիւնը չսփառորել:
12. Անխռովութիւնը պահել:

Ա՛հ, ի՞նչ գեղեցիկ զրուցուածքներ ըսած է նա:

Այո, պարոն Անգլիացի, ձեր տուած պատուէրները ամէնքն ալ յարմար եւ ընդունակ են, բայց ինդրեմ թոյլ տուէք մեզ հետեւիլ ձեր կանոններու, այսինքն, եկամուտներ տուէք, շատ չպիտի խօսիմ:

Միշտ արձակուրդ ունենալ. է՛հ գէշ՞ բան չէ, բայց, ուտել պէտք ունիմք ինչպէս նաեւ մեր մանկիկներուն անունդ տալ, երբ կ'ըսէք ննջարանին օդը փոխել, ութ ժամ քնանալ, վարժութիւն ընել եւ այլն եւ այլն, կը փափաքիմք ընել զանոնք որովհետեւ դիւրին են մեզ համար:

Մեր նախնիք կ'ըսէին թէ «Շատ ապրելու համար փորը կակուղ եւ ոտքերը տաք պահել պէտք է» միմիայն այդ չափը բաւական չէր:

Արդի մարդիկ կ'աւելցնեն օդափոխութիւն, վարժութիւն, մաքրութեան պատուէրներով լաւ առողջութիւն մը եւ վերջինները իրաւունք ալ ունին, հետեւիմք ուրեմն վերջիններուն:

Կ. Մ. Խ.

### ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսիա գանուող Օսմ. հպատակ Հայերու համար, ուսու կառավարութիւնը պաշտօնապէս ծանոյց կովկասի թերթերուն մէջ թէ Պաքուի, Քուղախի, Տփղիսի, Երեւանի եւ Կարսի կառավարիչներն հրահանք ստացած են կառավարութեան ծախքով իրենց տեղերը վերադարձցընել այդ գաւառները գանուող Օսմ. հպատակ բոլոր Հայերը:

— Ս. Պատրարք հայրը այցելութիւն մը տուաւ Անգլիոյ դեսպանին:

— Անգլիոյ դեսպան Սըր Ֆիլիպ Բըրբի որ ի ժողոջ կը մեկնի մայրաքաղաքէս, այս առթիւ Ս. թարգմանին հետ Պատրիարքարան եկաւ եւ հրամեշտ տուաւ Ս. Պատրիարք Հօր:

— Բարձր, Յարութիւն Փաշա Հինգչարթի օր Ս. Պատրիարքին բնակարանը գնաց այցելութեան:

— Ոստիկանութեան Իոնէն Պատրիարքարան հազարուեցաւ յուցակ մը վերադարձած զաղթականներու, որոց արձակման գործողութիւնք տակաւին չեն աւար-

տած Ոստիկանութեան Դուռն , եւ որք պիտի արձա-  
կուին եթէ Պատրիարքարանի կողմէ պէտք եղած ապա-  
հովութիւնը տրուի եւ երաշխաւորները ցուցուին , ըստ  
հաստատուել կանոնին :

Հայ Հռոմէականաց Կ.Պատրիարք Դեր . Տ. Ազարեան  
Հօր կրտսեր եղբայր Մեծ. Անտոն Էֆ. Ազարեան , որ  
երկար ժամանակէ ի վեր սրտի հիւանդութեամբ կը տա-  
նապէր Չորեքշաբթի առաւօտ հանգեաւ ի Տէր ի սուգ  
համակելով իւր համայն գերդաստան :

Հանգուցեալը առեւտրական եւ սեղանաւորական  
չըջանակին մէջ բարձր դիրք մ'ունէր եւ իր ազնիւ ու  
վսեմ բնաւորութեամբ թէ մերտդնեայ եւ թէ օտարազգի  
բարձր դասու ընտանեաց սէրն ու համակրանքն կը վա-  
յիլէր . բարեգործական հաստատութիւններ գրեթէ ան-  
խախտ վայելած են հանգուցելոյն առատաձեռնութիւններն ,  
ուստի յիշեալին մահը արդարեւ շատ ցաւալի եղած է :

Դեր . Ս. Կաթողիկոս եւ Պատրիարքն , ինչպէս նաեւ  
հանգուցելոյն կիներն , Վսեմ . Տիկին Սրբուհի Ազարեան ,  
հետզհետէ այցելութիւններ կ'ընդունին մայրաքաղաքիս  
օտար դեսպանաց թարգմաններու , օտար դաւանութեանց  
կրօնական պէտերու եւ առեւտրական ու սեղանաւորա-  
կան բարձրագոյն չըջանակներու ներկայացուցիչներու  
կողմանէ , որոնք իրենց անկեղծ ցաւակցութիւնները կը  
յայտնեն :

Ի յարգանս հանգուցելոյն եւ ի նշան սգոյ չորեքշաբ-  
թի օր փակուած էին բոլոր Հայ-Կաթողիկ վարժարան-  
ներն :

Հանգուցելոյն որդիքը Բարիզէն մայրաքաղաքս գա-  
լու համար ճամբայ ելած ըլլալով յուղարկաւորութեան  
տիւրը հանդէսին կատարուած յետաձգուած է յառաջիկայ  
երեքշաբթի օրուան :

Այս դառնաղէտ մահուան առթիւ Ծաղիկի խմբա-  
գրութիւնն ալ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Ա-  
զարեան սգակիր գերդաստանին :

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Թուրքիոյ եւ Յունաստանի հաշտութեան դաշ-  
նադրին Չ. յօդուածը կը սրամաղրէ որ տէրութիւններու  
պաշտօնական սա զեկուցումէն ետեւ թէ Յունաստանի  
պատերազմական տուգանքին վճարման համար կարգա-  
գրութիւններն եղած են, Օսմանեան զօրքերն թեալիա-  
յէ մեկնին մէկ ամսոյ մէջ , երկիրը Յոյն իշխանութիւն-  
ներուն յանձնելով տէրութիւններու կողմէ յասկապէս  
ընարուած պատուիրակներու ներկայութեամբ : Պատե-  
րազմական տուգանքին վճարման վերաբերեալ կարգա-  
գրութիւնները լինցան , եւ այս պաշտօնապէս զեկուցուե-  
ցաւ Բ . Դրան , Շարաթ սկսաւ Օսմ . զօրաց նաւ դրուել :  
Բազմաթիւ շողենաւեր զրկուեցաւ Վօլօ որ զօրքերը ի-  
րենց տեղերը կը փոխադրուին :

— Յունաստանի պատերազմական տուգանքին ա-

ռաջին մասնավճարն անցեալ շաբաթ օր Օսմ . Պանգային  
վճարուեցաւ : Դուռնարն է 1,000,000 ոսկի :

— Կիրակի վեհ . Սուլթանի երկրորդ քարտուղար  
Ճէվատ պէյ , որ յատուկ պաշտօնով Ս . Փէթէրսպուրկ  
զրկուած էր , մայրաքաղաքս վերադարձաւ Օտեսայի ճամ-  
բով : Զարը Ս . Աննայի պատուանշանին մեծ ժապաւէնը  
չնորհած է Ճէվատ փաշայի :

— Չորեքշաբթի գիշեր ժամ 6 ին մօտ Ունդարանի  
մէջ ծագած հրդեհ մը մոխիր դարձուց բազմաթիւ թաղեր  
հարիւրաւոր տուներով գրեթէ բոլորն ալ Իսլամաբնակ :  
Կրակն սկսաւ Հաճի գատին թաղի Զէյրէկ մզկիթին Ի-  
մամ Հաֆըզ Շաքիր Էֆէնտիի տունէն , ուր վարձով կը  
բնակէր եղբայրը՝ Գուլթուհի Գանպուր Նուրի : Թէև մե-  
ծամեծ ճիգեր եղան , սակայն ջուրի նուազութիւնն եւ  
չէնքերու խիտ առ խիտ եւ փայտաչէն ըլլալը պատճառ  
եղաւ հրդեհի ճարակման որ ինն թիւի բաժնուեցաւ եւ  
վերջապէս հակառակ մեծ ջանքերու առտուան ժամ 11ին  
միայն կարելի եղաւ հրդեհը մարել Այսպէս ճամբախի  
առջեւ : Այրած շէնքերու թիւը 193 ի կը հաշուուի :  
Կայսերական թիկնապահ Վէհպի եւ ուրիշներ , Կայս . Ի-  
րատէով , հրդեհի վայրը գային եւ հրկիզեալները պատս-  
պարելու եւ պէտքերնին հողալու համար հարկ . եղածն  
ըրին : Վեհ . Սուլթանն հրամայեց հրկիզելոց մէկ ցուցա-  
կը մատուցանել :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՄԱՆՈՑ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Անթիլեան կղզիներու Սպանիական նաւատորմը ո-  
րու կը հրամայէ ծովակալ Սէրվէրա՝ Վենեսուէլայի մօ-  
տակայ Քիւրասաօ կղզիէն մեկնեցաւ : Կը կարծուի որ  
նպատակն է Քուպայի հարաւակողման Սիէնֆրուէկոս քա-  
ղաքը ծովէն պաշարող Ամերիկեան տորմիզին վրայ յար-  
ձակիլ եւ կամ հոն կամ ի Սանթիակո պաշար ցամաք հա-  
նել Հալմանայի համար : Կ'ըսուի թէ այդ նաւատորմն օգ-  
նութիւն ստացած է , եւ հիմա կը բաղկանայ եօթը զրա-  
հաւորէ եւ հինգ յածաւորակէ : Ամերիկեան նաւատորմը  
որուն հրամանատարն է ծովակալ Սէմիսըն՝ Քուպայի եւ  
Հայիթիի միջեւ եղած նեղուցին մէջ կը գտնուի : Որով  
կը կարծուի թէ այսօր վաղը նաւամարտ մը տեղի ու-  
նենայ :

— Ամերիկեան կառավարութիւնը որոշեց 20000 ի  
հասցնել Փիլիպպեան կղզեխումբը զրկուած հետեւակա-  
զօրաց թիւը :

— Լորտերու ժողովին մէջ Լ . Սալպըրի յայտարարեց  
թէ Անդղիա չուզեր որ Չին կտոր կտոր բաժնուի : «Եւ-  
րոպեան եւ ոչ մէկ տէրութիւն պիտի ուղէ անոր զար-  
գացումն արդիւիլ հողային գծտութիւններով : Այս նպա-  
տակաւ ամենամեծ բարեկամութիւնը պիտի մշակենք բո-  
լոր տէրութեանց հետ որոց հետ այս մասին գործ ունե-  
նանք » :

— Լոնտոնէն հեռագրական լուրեր Մր . Կլատոնի  
մահը կը գուժեն :

Գաղթային նախարար Մր. Չէմպրլէյն խիստ կարեւոր բանախօսութիւն մ'ընելով ըսաւ. «Ներկայ վիճակը շատ ծանր է: Անգղիա Ռուսիոյ հետ համաձայնելու յաջողած չըլլալով եւ մինակ մնացած ըլլալով, սահմանափակ պահանջներ իր բարեկամական յարաբերութիւններն, եւ մասնաւորապէս ամրապնդել Ամերիկայի հետ բարեկամական կապերը: Ռուսիոյ հետ զաշնակցիլ կարելի չէ եղած եւ մինչեւ որ զաշնակցից մը չունենանք չենք կըրնար փնտել Ռուսիոյ: Ուստի պէտք չէ մերժենք զաշնակցիլ այն տէրութեանց հետ որոց չանհերն համաձայն են մերինն»: Մր. Չէմպրլէյն մասնաւորապէս ծանրացաւ Մ. Նահանգաց եւ Անգլիոյ միջեւ զաշնակցութեան գաղափարին վրայ:

— Անցեալ շաբթու Չինու պատերազմական տուգանքին վերջին մասնավճարը Լոնտոնի Ճափոնական դեսպանին տրուեցաւ Չինական դեսպանէն: Վճարումը եղաւ 12,500,000 Անգլ. օսկւոյ փոխանակագրով մը, որ քաշուած է Անգլիոյ Իրամատան վրայ: Այս միծաղումար փոխանակագիր առաջին անգամն է որ կը տեսնուի աշխարհի վրայ:

**ՆՈՐ ԱՅԲԲԷՆՍՐԱՆ ՊՍՏԿԵՐՍՉԱՐԴ.** —

Իզմիթի Մամուրեան սպարանէն հրատարակուած սոյն Քեբակաքը մէքոսով պատրաստուած գործ մը է, եւ լաւագոյնը նմանօրինակ հրատարակութեանց մէջ:

Գին 20 փարա:

**ԾԵԾՈՒԱԾ ԶՈՒՏ ԽԱՀՈՒԷ**

ԹԻԹԵՂԵԱՅ ՏՈՒՓԵՐՈՒ ՄԷԶ

Ի նպաստ Ս. Յակոբայ Ազգային Անկեղանոցի

Գին մէկ օխայի 12 դահեկան

1. Քիօն օխայի վերածելով այսուհետեւ ամէն տուփ 50 կամ 100 տիրէնիմ զուտ խանութ պիտի պարունակէ:
2. Սահուէին պինը, որոյ քիօն ասկէ առաջ 14 դրչի էր, այժմ մինչեւ ցնոր անօրէնութիւն, օխան պիտի ծախուի 12 դրուչի, որով 50 տիրէնիմոց առաջը պիտի ծախուի 1½ դրուչի, 100 տիրէնիմոց առաջը պիտի ծախուի 3 դրուչի:
3. Երկու տեսակ գոյնով խանութ պատրաստուեցաւ ըստ հանոյս սպառողաց, մին բաց գոյն, միւսը՝ թուր գոյն:

Անկեղանոցին խանութն կը գտնուի ամէն ծխախոտաներու եւ մանրամասնութեան քով, բաւական է որ այդ անունով փնտառուի վաճառողներէն:

Սահութեանը պէտք է դիմին վաճառման կեդրոնատեղին, որ է Ղալաթիա Զինծիլի խանի կից, Եէնի-Ճամի ճատտէսի, թիւ 70:

Արտօնատէր Ա. ՍՍ.ԲԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԵԱՆ  
(Նախկին ՊԱՂՏԱՏԼԵԱՆ Տպարան)  
Կ. Պոլիս, Սուրբ Լամբ 14.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ԳՐԱՏԱՆ  
Սուրբ Լամբ Գիւսսէսի թիւ 14, Կ. Պոլիս

**Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ**

**ԲԱՌԱՐԱՆ**

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ - ՀԱՅԵՐԷՆ

Գին 22 Ղրչ.

Սոյն Ֆրանսահայ բառարանը յօրինուած հետեւողութեամբ Լիդաէի տիպեղրական բառագրքին, կը պարունակէ Ֆրանսերէն լեզուին գրիթէ բոլոր բառերն իրենց բոլոր առումներով, որպէս եւ ամենէն գործածական ոճերն: Տէմիրճիպաշեան էֆէնտի բառաշխութեան մասին իւր ունեցած մասնաւոր յարմարութեամբն որով բազմաթիւ բառերով ճոխացուցած է հայ լեզուն, գտած է լեզուին պակասած գրական, գեղեցկագիտական, իմաստասիրական, գիտական եւ արհեստական բառերուն հայերէններն, այնպէս որ կատարեալ բառադիրք մը կրնայ համարուիլ Բառարանս ունեցած այս երբեակ ստաւելութեամբք, այսինքն առաւելութիւն Ֆրանսերէն բառից, առաւելութիւն նոր անունաց, առաւելութիւն 15—20,000 նորակերտ հայերէն բառից:

Այս բոլոր առաւելութեամբք Ֆրանսահայ Բառարանս. որ կը պարունակէ իր 1000 էրես, կազմեալ կը ծախուի անօրինակ գնով:

ՀՈՆԿ - ԻՌԵԿ - ՍԷՅԼԱՆ - Կ. ՊՈԼԻՍ

**ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ**

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

Ճեղաչ պէյ խանի դրան կից թիւ 10

Ամենէն ընդարձակ թէյի վաճառատունն ի Կ.



Պոլիս, որ ճիւղեր ունի Օսմ. Տէրութեան ամէն կողմերը: Գաւառաց ապսպրանքները փութով եւ ինամով կը գործադրուին, Չինական, Հնդիկ, Ճափայի եւ Սէյլանի ընտրելազոյն թէյ-ը, ուղղակի բերուած հոս: Թէյի նոր հունձքն սկսած է գալ: Չգուշացեք սոյն վաճառանիշին կեղծերէն:

Փնտռել ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ստորագրութիւնը: